

---

---

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԻՂԵԱԼԻ  
ՃԳՆԱԺԱՍԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տ. Հ.**

*Յուրաքանչյուր հասարակության իդեալների, արժեքային համակարգի, հասարակական տրամադրությունների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար բավական է թերթել այդ օրերի մամուլը: Հասարակագետ-տեսաբան Գագիկ Սողոմոնյանը ճիշտ է նկատում. «Արմատական փոխակերպումների էությունն ու բովանդակությունը ըմբռնելու արդյունավետ եղանակներից մեկը հասարակական համակարգի սոցիոմշակութային հիմքերի հետազոտումն է»<sup>1</sup>: Բսկ մամուլը սոցիոմշակութային այն խառնարանն է, որտեղ ծնվում, զարգանում և ծավալվում են հասարակական գործընթացները: Ուստի մամուլի ուսումնասիրությունից էլ պետք է սկսել հասարակական իդեալի ընդհանուր բնութագրի, զարգացման միտումների և փոխակերպումների քննությունը:*

*Փոխակերպվող հասարակության հայեցակարգի քննությանն անդրադարձել են շատ հայ տեսաբաններ՝ Լ. Աբրահամյանը, Է. Աթայանը, Հ. Գևորգյանը, Է. Հարությունյանը, Ա. Հովսեփյանը, Կ. Միրումյանը, Հ. Շաքարյանը և ուրիշներ:*

*Հասարակական կենսափոխակերպության, սոցիոմշակութային արժեքների վերահիմաստավորման անհրաժեշտությունը, տագնապն ու անորոշությունը, որ սովորաբար նախորդում են անցումային փուլերին, փոխակերպվող հասարակությունը վերածում են սոցիոմշակութային առումով ռիսկային գոտու: Այդպիսի հասարակություններում առաջնային կարևորություն են ստանում այնպիսի հրատապ հարցեր, ինչպիսիք են, օրինակ՝ հասարակությունն արդյոք ունի՞ անորոշ և անկանխատեսելի իրավիճակներում հարմարվելու և ադապտացիոն գործունեություն ծավալելու հնարավորություններ, վերափոխվող հասարակություններում ինչպե՞ս է լուծվում սոցիոմշակութային լեզվափոխման, ազգային և հասարակական ինքնագիտակցության ձևավորման հիմնախնդիրը: Այս հարցերը հրատապ են նաև ժամանակակից հայ հասարակության համար և ամենատարբեր բովանդակությամբ ու տեսանկյուններով արծարծվում են մամուլում:*

*Թևոս Խաչատրյանը «Առավոտ» օրաթերթի «Ոգեհարցություն՝ անցյալի մոտիվներով» վերնագրով հոդվածում ներկայացնում է հայ հասարակության բնութագիրը, որն արդեն հրաժարվել է նախկին՝ կոմունիստական իդեալներից, բայց դեռ լիովին չի որդեգրել արևմտյան ժողովրդավարական արժեքները: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է հայ հասարակության ինքնագիտակցության վրա հասարակական փոխակերպումների*

---

<sup>1</sup> **Սողոմոնյան Գ.**, *Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները*, Ե., 2005, էջ 144:

ազդեցությանը, ապա նկատում. «Պարզից էլ պարզ է, որ հայաստանյան ներկա իրողությունները հասկանալու համար նախևառաջ հարկավոր է արձանագրել, որ մենք արդեն սովետիկոս չենք և դեռևս ժողովրդավար չենք, ինչպես հռչակված է սահմանադրությամբ և ամենօրյա խոսք ու գրույցում: Եվ մտավոր, հոգևոր, նույնիսկ ֆիզիկական այս ճողվածությունը՝ արդեն «չենք-»-ի ու «դեռևս չենք»-ի արանքում, պարտադրում է մտածողության և վարքի այնպիսի ձևեր, որոնք միաժամանակ հատուկ են սովետիկոսներին՝ յուրատեսակ ռենեսանս ապրող նախկին կոմսոմոլների, բազենների...»<sup>2</sup>:

Հողվածում բավական դիպուկ է այդ տարիների հայ հասարակության ընդհանուր բնութագիրը՝ անորոշություն, ինքնագիտակցության ցածր մակարդակ. դրական իդեալների գրեթե իսպառ բա-ցակայություն... Այսպես է բնութագրում հետխորհրդային շրջանի հայ հասարակությունը նաև մամուլը: Սակայն վերջինս, իրադրության արձանագրումից ու չեզոք բնութագրումից բացի, պետք է առաջադրի նաև առաջընթացի շահագրգիռ գաղափարներ. ճգնաժամային իրավիճակներում հասարակությունը ելքի, կենսական խրնդիրների լուծման իրական ուղիների կանխանշման կարիք ունի: Այնինչ հայաստանյան լրատվամիջոցներից ոչ բոլորն են, որ գիտակցում ու կատարում են իրենց այս հասարակական առաքելությունը:

Հասարակական իդեալների խեղաթյուրման, հայ հասարակությունը գաղափարական իդեալներից զուրկ անդեմ հավաքականության վերածվելու մտահոգիչ փաստն է արձանագրում «Ազգ» օրաթերթը<sup>3</sup>: «Ազգային գաղափար» վերնագրով հողվածում զուգահեռներ են անցկացվում հայ հասարակությունը սնուցող երբեմնի իդեալների և արդի շրջանում ձևավորված արժեհամակարգի միջև: Հողվածագիրը, վերլուծելով իրավիճակը, եզրակացնում է. «1988-ի առաջնային գաղափարը Արցախի վերատիրումն էր, ապա անկախությունը, և այդ գաղափարները շեփոթող ուժերը դրսևորվեցին իբրև համեմատաբար կենսունակ քաղաքական դաշտում: Այնուհետև հայությունն ունակ չգտնվեց կամ չհասկացավ կարևորությունը առաջադրելու նոր ազգային գաղափար, թեև այդպիսին կարող էին լինել ազատագրված տարածքների վերաբնակեցումը, հայրենադարձությունը... և, բնականաբար, չունեցավ նոր ժամանակներին համապատասխան հասարակական ընտրանի: Ո՞րն է այսօրվա ազգային գաղափարը»: Իսկապես, թերթելով մերօրյա մամուլը՝ դժվար թե հնարավոր լինի հստակ պատասխան տալ առաջադրված հարցին: Ըստ էության, հասարակությունը բաժանված է գաղափարական տարբեր սկզբունքներով ապրող խմբավորումների: Հասարակության մի շերտի համար ազգային գաղափարը և միակ իդեալը իշխանության հասնելն է, մյուս խմբի համար՝ օրվա հաց վաստակելը, մեկ այլ խումբ ապրում է օտարամուտ արժեքներով: Մերօրյա մամուլը ևս հիմնականում չի առաջնորդվում համընդհանուր ազգային գաղա-

<sup>2</sup> Առավոտ, 26. XI.2004:

<sup>3</sup> Ազգ, 7.06.2001:

փարներով, չունի մեկ ընդհանուր գաղափարական ուղղվածություն, ինչը կարելի լիներ իդեալ համարել:

Օրինակ՝ թերթերով «Հայկական ժամանակ» և «Հայոց աշխարհ» պարբերականները՝ ընթերցողին կթվա, թե դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է տարբեր երկրներում, տարբեր հասարակություններում գոյություն ունեցող իրավիճակներ և իդեալներ: «Հայոց աշխարհ»-ը «Ընդդիմությունը ձեռքից գնում է» վերնագրով հոդվածում գրում է. «Երկու վախը մի մահ է: Ինչպես հայտնի է, հայրենի ընդդիմությունը մահու չափ ահաբեկված է Քոչարյանի 3-րդ, 4-րդ և այդպես շարունակ ժամկետով նախագահ վերընտրվելու սարսափելի հեռանկարից»<sup>4</sup>: Այս հրապարակման ենթատեքստում կարելի է կռահել թաքուն համակրանք գործող նախագահի հանդեպ և բացասական վերաբերմունքի ձևավորման միտում ընդդիմության նկատմամբ: Սա հակասում է օբյեկտիվ և անաչառ լրատվության սկզբունքներին: Սա ակներև է ընդդիմությանը «սպասարկող» մամուլը ներկայացնող «Հայկական ժամանակ» օրաթերթի էջերում: Բնորոշ օրինակներից է «Ամենամյա առաջընթաց՝ տեղում» վերնագրով հոդվածը: Այն լրագրության հիմնարար սկզբունքներին հակասում է նախ նրանով, որ ներկայացնում է բացառապես հեղինակի անձնական վերաբերմունքը, սեփական որակումները, մյուս կողմից էլ բացակայում են փաստական հիմնավորումն ու հասարակական շահի գիտակցությունը: Գնահատականներ տալով ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի ամանորյա ուղերձին՝ պարբերականը հեզանքով գրում է. «Հասկանալի պատճառով այն ընկալվում է որպես հերթական գվարձալի ծրագիր»<sup>5</sup>:

Պետական խորհրդանիշների նկատմամբ այսպիսի անհարգալից վերաբերմունքի պատճառը, թվում է, հասարակության՝ անցումային փուլի արժեհամակարգային փոխակերպումներն են: Մամուլում այս երևույթներն արտահայտվում են հայելային արտացոլմամբ: Վերլուծությունները հանգեցնում են մեկ հիմնական եզրակացության. հայ հասարակությունը ձերբազատվել է նախկին խորհրդային իդեալներից, սակայն դեռ չի կարողացել լիովին յուրացնել նոր՝ փոխակերպված իդեալները: Այս իրավիճակից ելքի իր ճանապարհն է առաջարկում «Ազգը»: «Հայաստանը դեռ չի ճշտել իր դիրքն աշխարհում» վերնագրով հոդվածում<sup>6</sup> Գ. Աբրահամյանը այն համոզմունքն է հայտնում, թե Հայաստանը աշխարհում դեռ չի ճշտել իր դիրքը, քանի որ չունի ազգային անվտանգության հայեցակարգ: Հոդվածից կարելի է կռահել, թե օրաթերթն ընդհանրապես ազգային ինքնագիտակցության առկա անորոշությունից ելքի ինչ ճանապարհ է առաջարկում. «Սակայն բոլոր դեպքերում ազգային անվտանգության խնդիրները դիտարկելիս աներկրա է դառնում ազգային գաղափարախոսության կատեգորիայի մշակումը: Սա հենց այն անկյունաքարն է, որի շուրջ պետք է հավաքվեն պետությունը,

<sup>4</sup> Հայոց աշխարհ, 3.IX.2005:

<sup>5</sup> Հայկական ժամանակ, 16.I.2002:

<sup>6</sup> Ազգ, 19.X.2001:

քաղաքացիները, հասարակական կազմակերպությունները, քաղաքական բոլոր ուժերը»:

Հետևաբար հասարակական գիտակցության մեջ արմատացած ավանդույթները, հավատալիքներն ու իդեալները միանգամից փոփոխության ենթարկել հնարավոր չէ: Դրան հասնելու համար նախ պետք է խորությամբ ուսումնասիրել հասարակության հոգեբանությունը, տվյալ էթնոսի զարգացման ուղին, հասարակական գիտակցության վրա ազդող բոլոր գործոնները: Իսկ այդպիսի բազմազան տեղեկություններ կարելի է քաղել նաև լրատվամիջոցներից, քանի որ ՁԼՄ-ները, հատկապես մամուլը, հասարակական կյանքը վավերագրողի դեր են կատարում: Մամուլում օր օրի արտացոլվում են բոլոր այն երևույթները, որոնք տվյալ ժամանահատվածում բնորոշ են հասարակությանը: Նկատենք, որ լրատվամիջոցներից քաղված տեղեկություններն ավելի իրական ու փաստացի-վավերական են, քան, ասենք, պատմագիտության հաղորդածները, թեկուզ այն պատճառով, որ լրատվամիջոցներն իրենց գործունեության ընթացքում գործ են ունենում նաև մարդկանց հետ՝ ի տարբերություն պատմագրության, որ գրանցում է միայն փաստերը: Այնպես որ հայաստանյան ՁԼՄ-ների ուսումնասիրությունը կարող է հայ ազգային-հասարակական իդեալի դինամիկայի, փոխակերպումների մասին մեծ նյութ տալ, որ անհրաժեշտ է կիրառել պետական տեղեկատվական քաղաքականության, ինչպես նաև բուն պետական քաղաքականության ռազմավարական դրույթներում:

Հասարակական իդեալի ձևավորման, դրա փոխակերպման վրա մեծապես ազդում են նաև ներկայումս տեղի ունեցող գլոբալացման գործընթացները, որոնք ներթափանցել են հասարակական կյանքի բոլոր ոլորտներ: Բացառություն չէ նաև տեղեկատվական համակարգը: Դա է ակնարկում նաև մասնագիտական գրականության մեջ տարածված այն դիտարկումը, թե «նախկին ազգային կառավարությունների կողմից իրականացվող բազմաթիվ գործառույթներ են վերապահված տրանսազգային կորպորացիաներին և քաղաքացիական հասարակության ինստիտուտներին: Ազգային ու միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն աճող ազդեցություն են ունենում հասարակական կարծիքի ու քաղաքականության վրա, կատարում են սոցիալական պաշտպանության գործառույթներ ու նույնիսկ մասնակցում են ՄԱԿ-ի կոմիտեների ու հանձնաժողովների աշխատանքներին»<sup>7</sup>:

Հայ տեսաբանների մեծամասնությունը կարծում է, որ անցումային հասարակություններում, հասարակական նոր իդեալների առաջացմանը զուգընթաց, նոր իմաստավորմամբ շարունակում են գործառել նաև ավանդաբար գոյություն ունեցողները: Օրինակ՝ հանդուրժողականությունը: Ազատական հասարակության ձևավորման միկրոսոցիալական մակարդակում (ընտանեկան, ազգակցական, դրացիական կապեր և այլն) դա դեռևս կայուն և կարևոր արժեք է՝ անհատի

<sup>7</sup> Քոչարյան Հ., Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Ե., 2003, էջ 15:

թե պահվածքի, թե գործելակերպի առումով: Մինչդեռ մակրոսոցիալական մակարդակում (միջխավային, միջկուսակցական, ազգամիջյան, միջպետական հարաբերություններ և այլն) հակադրությունների խորացման պատճառով այն դադարում է գործելուց, և կորցնելով հավասարակշիռ համակեցության սոցիոմշակութային հիմունքները՝ համակարգը հայտնվում է անհանդուրժող հարաբերությունների ճիրաններում: Ուստի կարևոր է, որ սոցիալական բոլոր ինստիտուտները (ընտանիք, դպրոց, պետություն, եկեղեցի և այլն) գործընկերային երկխոսական նորմերի մշակմամբ կանոնակարգեն ու պաշտպանեն սոցիալական սուբյեկտների՝ հասարակայնորեն ընդունելի, բայց միաժամանակ անձնապես իմաստավորված դերային վարքը՝ համակեցության փոխհանդուրժելի, կայուն մթնոլորտ ձևավորելու համար: Հավանաբար ՁԼՄ-ների դաշտը ևս պետք է համարել ինքնուրույն սոցիալական ինստիտուտ և դասել վերևում նշվածների շարքը:

Անցումային հասարակության բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ մարդիկ հայտնվում են այնպիսի այլընտրանքային իրավիճակում, որտեղ հնի և նորի պայքարը ձեռք է բերում ընդգծված գաղափարաքաղաքական և իմաստաարժեքային ուղղվածություն: Դա պայմանավորված է նրանով, որ դեպի ապագան տանող ուղին անցնում է սոցիոմշակութային ռիսկի գոտիով և վերաբերում է մարդկանց համակեցության հիմունքներին: Այդ համատեքստում առաջանում է նախորդ կենսափիլիսոփայության, սոցիոմշակութային արժեքների ու նորմերի վերաիմաստավորման և վերագնահատման անհրաժեշտություն: Այս առիթով բնութագրական է ռուս տեսաբան Կ. Իսակի հետևյալ եզրահանգումը. «...Ռիսկն ու տազնապը, փորձությունն ու վտանգը դառնում են անցումային հասարակության առօրեական իրողություններ: Այս պայմաններում սոցիալական սուբյեկտների վարքը բաղադրող հիմնական դրդապատճառ է դառնում ոչ թե զարգացումը, այլ անվտանգությունը»<sup>8</sup>:

Անցումային հասարակությունները նոր աշխարհակարգի ձևավորման ռիսկային գոտում են, քանի որ իրականությունը վերածվում է սոցիալական փորձարկումների յուրահատուկ դաշտի, որտեղ փորձարկվում են զանազան տեխնոլոգիաներ, որոնց նպատակը ամբողջատիրությունից ազատագրված երկրների սոցիոմշակութային կլանումն է:

Սոցիալիստական ամբողջատիրական հասարակարգերի փլուզումից հետո քայքայվեց նաև այն սնող ու արդարացնող սոցիոմշակութային արժեհամակարգը: Հետհամայնավարական անցումային հասարակությունները կտրուկ հրաժարվեցին խիստ գաղափարայնացված արժեքներից: Պատմության գիրկն անցավ հին իմաստաարժեքային համակարգը, իսկ նորը մեկ օրում չէր կարող ծնվել: Արդյունքում հասարակության սոցիոմշակութային ոլորտում առաջացան խոռոչներ, սակայն յուրաքանչյուր դատարկություն վաղ թե ուշ

<sup>8</sup> **Исаев К.** “Общество риска” в условиях глобализации (Социологические исследования, 2001, N 12, с. 16).

ինչ-որ բանով լցվում է: Նման պարագայում ամենամեծ խնդիրն է՝ ում նմանվել:

Արդի հայ մամուլում այս թեմայով բազմաթիվ հրապարակումների կարելի է հանդիպել: «Հայկական ժամանակ» օրաթերթը հաճախ է անդրադառնում այս խնդրին՝ իհարկե, հիմնականում նպատակ ունենալով քննադատել իշխանության ներկայացուցիչներին, այլ ոչ թե փորձել պարզել հասարակական այդ արատավոր երևույթի առաջացման պատճառները: Այդ տեսակետից բնորոշ է թերթի «Ռուսախոս հայրենասերների ողբը» վերնագրված հոդվածը<sup>9</sup>: Հեղինակը, անդրադառնալով պատգամավորի ժամանակակից կերպարին, գրում է. «Կտակարանային ճշմարտություն կա. հնարավոր չէ ծառայել միաժամանակ երկու տիրոջ: Բայց պարզվում է՝ կան մարդիկ, ուժեր, ովքեր միանգամից չորս տիրոջ ծառայելու հայտ են ներկայացնում: Այդ տերերից մեկը Ռուսաստանն է, մյուսը՝ Արևմուտքը, երրորդը՝ Սփյուռքը, չորրորդը՝ Հայաստանը: Իսկ ինչո՞վ է ավարտվում նման փորձը: Պատասխանը պարզ է. նմանները միանգամից ուրանում են բոլոր տերերին»: «Առավոտ» օրաթերթը քննում է օտար ազդեցություններին ենթարկվելու պատճառները և փորձում ստեղծված իրավիճակից ելքի ճանապարհներ առաջարկել: Այսպես, օրաթերթը «Հասարակական մեծ համաձայնագիր» վերնագրված հոդվածում գրում է. «Քանի դեռ բոլոր հարցերի քննարկման ժամանակ իշխում է միակ կոնստրուկցիոն սկզբունքը, այս երկիրը չափազանց հեշտ է տրվելու տարբեր ազդեցությունների: Շատ հեշտ է աշխատելու այս երկրում ստվերային պայմանավորվածությունների մեքենան, շատ հեշտ են ծախվելու սկզբունքները, ու կլանը դառնալու է ամենաժողովրդավարական կառույցը... մենք պետք է վերջապես սովորենք ապրել կողք կողքի»<sup>10</sup>:

Ուսումնասիրություններից հետևում է, որ ներկայումս հայ հասարակության շրջանում, ի տարբերություն խորհրդային ժամանակների, համընդհանուր իդեալներ գոյություն չունեն. առանձին հասարակական խմբեր դավանում են տարբեր իդեալների: Այսինքն՝ ժամանակակից հայ հասարակությանը համընդհանուր հասարակական իդեալների ճգնաժամ է ապրում: Տեսական գրականության մեջ այս կապակցությամբ տարածված է այն միտքը, թե ստեղծված իրավիճակի հիմնական պատճառն է այն, որ հասարակական գիտակցության ձևավորման հարցում հիմնական ազդեցություն ունեցող հասարակական իդեալներն իրենց տեղը զիջել են անհատների այս բուսական շահերին: Ուստի առանձին անձինք, այդ թվում նաև իշխանության վերին օղակներում գտնվող անհատները, հաճախ որոշումներ են կայացնում՝ ելնելով այն բանից, թե ինչն է այդ պահին առավել շահավետ իրենց և իրենց յուրայիններին: Սրանք քաղաքացիական հասարակության թերի ձևավորված լինելու ախտանիշներ են:

<sup>9</sup> Հայկական ժամանակ, 26.1.2002:

<sup>10</sup> Առավոտ, 3.VII.2003:

Կարծում եմ՝ իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է օգտագործել այն հզոր ներուժը, որ ունեն լրատվամիջոցները: Չէ՞ որ հասարակական կարծիք ձևավորելու գործառնությունը հիմնականում վերապահված է հենց վերջիններիս: Սակայն չսահմանափակելով խոսքի ազատությունը՝ ԶԼՄ-ների գործունեությունը անհրաժեշտ է կանոնակարգել նպատակային և կշռադատված պետական տեղեկատվական քաղաքականությամբ: Անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր դաշտ, որպեսզի հայաստանյան լրատվամիջոցները հասարակության շրջանում տարածեն այնպիսի իդեալներ, որոնց միջոցով հնարավոր կլինի «բուժել» բազմաթիվ օտարամուտ գաղափարներով ուռճացած հայ հասարակական գիտակցությունը: Անհրաժեշտ քայլեր չձեռնարկելու կամ դրանք ուշացնելու դեպքում հնարավոր է, որ լուրջ խնդիրներ առաջանան Հայաստանում հասարակական կարծիքի ձևավորման հարցում: Առանց այդ էլ երկրում տիրող իրավիճակը այս առումով դրական զարգացումներ չի կանխատեսում: Բոլորին է հայտնի, որ այժմ մեր հասարակության մեջ ձևավորվել է սոցիալական մի նոր վերնախավ կամ, ինչպես իրենք են սիրում իրենց կոչել, «էլիտա», «նոր հայեր», որ հասարակական կարծիքը, ազգային իդեալներն ու ավանդույթներն ընկալում է որպես իր գործունեությանը խանգարող հանգամանք: Եվ անում է ամեն հնարավորը, որպեսզի հասարակությունը դավանի պարզունակ, ցածրարժեք իդեալների, իսկ հասարակական կարծիքը ծառայեցնում է իր պահանջումները բավարարելուն: Ասվածի վկայությունն է այն, որ մերօրյա մամուլը ողողված է հասարակական-քաղաքական կյանքում հայտնի տարբեր անձանց, գործարարների մասին ցածրարժեք բամբասանքներով կամ դժբախտ պատահարների մասին պատմող նյութերով: Իսկ հասարակության մեծամասնությունը մեծ հաճությամբ և հետաքրքրությամբ կարդում է այդ նյութերը և դարձնում քննարկման առարկա: Հետևաբար կրթական հաստատություններում, տարբեր գրասենյակներում և նույնիսկ պետական կառավարման մարմիններում մարդիկ զբաղված են բամբասանքների քննարկմամբ: Հենց այսպես էլ ձևավորվում է հասարակական կարծիքը: Ուստի եթե տարիներ առաջ՝ խորհրդային ժամանակաշրջանում, քննարկման թեմա էին դառնում գիտական հայտնագործությունները, այս ոլորտում հայտնի անձանց գործունեությունը, ապա ներկայումս ՀՀ-ում հասարակական կարծիքը չի բարձրանում բամբասանքի մակարդակից: Այս իրավիճակի հիմնական պատճառները առաջին հերթին պետք է որոնել հասարակական իդեալների փոխակերպման ու հասարակական համընդհանուր իդեալների ճգնաժամի մեջ:

**КРИЗИС ОБЩЕСТВЕННЫХ ИДЕАЛОВ  
В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПЕРИОДИКЕ**

**АРУТЮНЯН Т. О.**

Резюме

Существуют ли в современном армянском обществе общенациональные идеалы и если “да”, то как они отображаются в прессе? Чтобы составить

представление, достаточно ознакомиться с республиканской периодикой. Однако периодика, по сути, являет собой бесстрастную констатацию фактов и нейтральных характеристик тех или иных жизненных и общественных реалий. Создается впечатление, что в современном обществе, в отличие от советского, нет общенациональных идеалов. Есть отдельные общественные группы, которые декларируют свои идеалы. Исходя из сказанного, необходимо создать в прессе благоприятную почву для “возращивания” идей, которые помогли бы нашему обществу преодолеть духовный кризис.

**THE CRISIS OF SOCIAL IDEALS  
IN MODERN ARMENIAN PERIODICALS**

**T. HARUTYUNYAN**

Abstract

Are there any national social ideals in modern Armenian society and if “yes” how are they reflected in modern Armenian press? It is enough study the modern Armenian periodical press to answer this question? Newspapers are the arena where facts are clarified and where the phenomena of social and vital importance are examined. The research into modern periodicals reveals that unlike the Soviet society modern Armenian society does not have national ideals. Moreover, there are some social groups, which dictate their ideals. Hence, it is important that modern Armenian periodicals lay the foundation for such ideals, which will help the society to overcome the modern crisis of social ideals.